Գենդերային հավասարությունը կենսաբազմազանության պահպանման գործում

Ի՞նչ է կենսաբազմազանությունը

Կենսաբազմազանությունը Երկրի վրա կյանքի ամբողջ բազմազանությունն է՝ բույսեր, կենդանիներ, միկրոօրգանիզմներ և էկոհամակարգեր: Այն հիմք է հանդիսանում՝

- պարենային անվտանգության,
- մաքուր ջրի,
- մարդու առողջության,
- կլիմայի փոփոխության նկատմամբ դիմակայունության:

Հայաստանը շատ հարուստ բնությամբ և եզակի էկոհամակարգերով երկիր է, որտեղ պահպանվում են բազմաթիվ տեսակներ, և որտեղ ակտիվ աշխատանքներ են տարվում շրջակա միջավայրի պահպանության ամրապնդման ուղղությամբ: Այստեղ հանդիպում է ավելի քան 3800 բուսատեսակ (կովկասյան ամբողջ բուսական աշխարհի մոտ կեսը) և մոտ 17000 կենդանատեսակ, այդ թվում՝ բազմաթիվ էնդեմիկ տեսակներ: Հայաստանի կենսաբազմազանությունն աչքի է ընկնում էնդեմիկության բարձր մակարդակով. կենդանական աշխարհի մոտ 500 տեսակ (ընդհանուր կենդանական աշխարհի մոտ 3%-ը) և բուսական աշխարհի 147 տեսակ (ընդհանուր բուսական աշխարհի 3,8%-ը) համարվում են էնդեմիկ: Չնայած կովկասյան տարածաշրջանը զբաղեցնում է ընդամենը 6,7%-ը, Հայաստանը ճանաչված է որպես կենսաբազմազանության «թեժ կետ»՝ իր բացառիկ տեսակային հարստության և էնդեմիկ տեսակների բարձր խտության շնորհիվ: Հայաստանն աշխարհի կենսաբազմազանության 30 «թեժ կետերից» մեկն է:

Հայաստանի պահպանվող տարածքների ցանցը ստեղծվել է՝ պահպանելու համար ազգային բնական և մշակութային ժառանգությունը, ներառյալ կարևոր կենսամիջավայրերը, տեսակները, լանդշաֆտները, ինչպես նաև կարևոր երկրաբանական կազմավորումները: Մասնավորապես, ստեղծվել են մի շարք պահպանվող տարածքներ՝ Հայաստանի Կարմիր գրքերում գրանցված եզակի, հազվագյուտ և էնդեմիկ տեսակների կենսամիջավայրերը պահպանելու համար:

Ներկայումս Հայաստանում գործում է 3 պետական արգելոց՝ «Խոսրովի անտառ», «Շիկահող», «Էրեբունի», 4 ազգային պարկ՝ «Սևան, «Դիլիջան», «Արփի լիճ», «Արևիկ» և 27 պետական արգելավայր:

Ի՞նչ է գենդերը

Գենդերը կանանց և տղամարդկանց սոցիալական դերերն են, իրավունքներն ու հնարավորությունները:

Գենդերային գործոնն ազդում է՝

- բնական պաշարների հասանելիության,
- որոշումների կայացմանը մասնակցության,
- շրջակա միջավայրի ճգնաժամերի նկատմամբ խոցելիության վրա:

Գենդերը վերաբերում է տղամարդկանց և կանանց սոցիալական դերերին և նրանց միջև հարաբերություններում գերազանցության խնդրին, որոնք սովորաբար խոր ազդեցություն ունեն բնական պաշարների օգտագործման և կառավարման վրա: Գենդերը հիմված չէ սեռի կամ տղամարդկանց ու կանանց միջև կենսաբանական տարբերությունների վրա: Այն ձևավորվում է մշակույթի, սոցիալական հարաբերությունների և բնական միջավայրերի կողմից:

Այսպիսով, կախված արժեքներից, նորմերից, սովորույթներից և օրենքներից, տղամարդիկ և կանայք աշխարհի տարբեր մասերում զարգացրել են տարբեր գենդերային դերեր: Ավանդաբար, գենդերային դերերը կանխորոշում են աշխատանքային ռեսուրսների բաշխումը, որոշումների կայացման իրավասությունները և գիտելիքների տեսակները՝ հիմվելով սոցիալական սպասումների վրա: Ըստ իրենց կարիքների՝ տղամարդիկ և կանայք հաճախ ռեսուրսներն օգտագործում և կառավարում են տարբեր ձևերով:

Ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների, կանայք արտադրում են աշխարհի սննդի մինչև 50%-ը և որոշ զարգացող երկրներում՝ մինչև 80%-ը:

Այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում հողի սեփականատերերի 15%-ից պակասը կանայք են:

Ինչո՞ւ է գենդերը կարևոր բնապահպանության համար

- Կանայք հաճախ տիրապետում են եզակի գիտելիքների՝ սերմերի, հողի և ջրի վերաբերյալ:
- Տղամարդիկ և կանայք տարբեր կերպ են օգտագործում պաշարները:
- Հավասար մասնակցությունը նպաստում է բնապահպանական նախագծերի ավելի կայուն դառնալուն:
- Գենդերային հավասարությունը նպաստում է կլիմայի փոփոխությանը հարմարվողականությանը:

Գյուղական վայրերում կանայք և տղամարդիկ տարբեր, բայց փոխլրացնող դերեր են կատարում կենսաբազմազանության, այդ թվում՝ ագրոկենսաբազմազանության պահպանման և կայուն օգտագործման մեջ:

Հայաստանն աշխարհում բազմաթիվ մշակաբույսերի, այդ թվում՝ ցորենի, գարու, լոբազգիների, խաղողի, ծիրանի, տանձի և վայրի խոտաբույսերի ծագման կենտրոններից մեկն է: Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերն աչքի են ընկնում իրենց բավական հարուստ ագրոկենսաբազմազանությամբ: Կանայք այս կենսաբազմազանության հիմնական պահապաններն են. նրանք կառավարում են տնամերձ այգիները, մշակում սերմեր, զբաղվում ավանդական սննդամթերքի վերամշակմամբ և մանր եղջերավոր անասունների խնամքով: Այնուամենայնիվ, նրանք բախվում են հողերի

և շուկաների հասանելիության, ֆինանսավորման և որոշումների կայացման գործընթացում խոչընդոտների, որոնք սահմանափակում են նրանց տնտեսական ներուժը և սպառնում ագրոկենսաբազմազանությանը:

Գենդերային գործոնը և կենսաբազմազանության պահպանումը

Գենդերային գործոնը պետք է լինի առաջնահերթ՝ կենսաբազմազանության պահպանման արդար և արդյունավետ գործելակերպերի վերաբերյալ որոշումների կայացման գործում: Էթիկայի առումով, սոցիալական դերերով պայմանավորված հավասար մասնակցության ապահովումը մարդու իրավունքները հարգելու, պաշտպանելու և խթանելու անկյունաքարն է: Որպես գործիք, գենդերային հավասարության հստակ ներառումը կարող է ամրապնդել կենսաբազմազանության արդյունքները և հնարավորություն տալ ավելի արդյունավետ պահպանման գործելակերպեր իրականացնել: Գենդերային հավասարության խթանումը նպաստում է կենսաբազմազանության պահպանմանը:

Շարժվելով առաջ

Կանայք կարևոր դեր ունեն բնապահպանության գործում: Այս գործընթացում կանանց դերի մասին իրազեկվածության բարձրացումը կհանգեցնի քաղաքականությունում նոր մոտեցումների մշակման, որոնք կընդլայնեն կանանց մասնակցությունը կենսաբազմազանության կորստի և կլիմայի փոփոխության դեմ պայքարի գործում: Նման մոտեցումները կարող են նպաստել կլիմայական արդարությանը՝ ցուցաբերելով ֆինանսական և այլ տեսակի աջակցություն համայնքահեն, էկոհամակարգերի վրա հիմված կլիմայի փոփոխության հետևանքների մեղմման և դիմակայունության նախաձեռնություններին, որոնք նպաստում են կանանց իրավունքների պաշտպանությանը, կարիքների բավարարմանը, դերի ընդլայնմանը և ձգտումների իրականացմանը:

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանայք հանուն ընդհանուր ապագայի» (WECF) կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Կանանց դերի բարձրացում Հայաստանի պահպանվող տարածքներին սահմանակից բնակավայրերում» ծրագրի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ
շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2,
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

Երևան 2026

Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Կանայք հանուն ընդհանուր ապագայի» (WECF) կազմակերպության ֆինանսավորմամբ իրականացվող «Կանանց դերի բարձրացում Հայաստանի պահպանվող տարածքներին սահմանակից բնակավայրերում» ծրագրի շրջանակում։

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ
շրջակա միջավայրի» ՀԿ

ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2,
Հեռ.՝ (+374 10) 52 36 04
Էլ. փոստ՝ officeawhhe@awhhe.am
Վեբ կայք՝ http://www.awhhe.am

Երևան 2026